Լ. Ա. ԱՍՈՅԱՆ, Հայերը Ռուսական կայսրությունում 19-րդ դարի վերջին. Պատմաժողովրդագրական հետազոտություն (ըստ 1897 թվականի Համառուսաստանյան մարդահամարի տվյալների), *Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2010, 260 էջ:*



Պատմաժողովրդագրական հետազոտությունը պատմագիտության առանցքային ու կարևոր ուղղություններից է, որը հայագիտության մեջ լուրջ ուսումնասիրության առարկա դարձավ հատկապես XX դարում: Այս առումով մեծ նշանակություն են ստանում համապետական մարդահամարները, որոնց շնորհիվ վերհանված բազմապիսի տվյալները գալիս են փոխարինելու բնակչության թվաքանակի, գրագիտության աստիճանի, դավանանքի, տնտեսական և տարաբնույթ այլ ոլորտների վերաբերյալ վիճակագրական արդյունքներին, որոնք նախկինում հնարավոր էր քաղել ծխական մատյաններից ու հաշվառման այլ ամփոփագրերից:

Մեր օրերում անցկացվող մարդահամարներն ունեն հսկայական (հատկապես քաղաքական ու տնտեսական) նշանակություն բնակչության թիվն ու տեղաբաշխումը, զբաղվածությունն ու սեռատարիքային կազմը, այլևայլ գործընթացներ ճշգրտելու, այդ թվում նաև պետության համար պլանավորում իրականացնելու, ռազմավարություն մշակելու, անգամ քաղաքական գործընթացներ իրականացնելու համար կարևոր նախապայման դառնալու առումով:

Վերոնշյալ հայեցակետերի մանրազնին քննությամբ աչքի ընկնող եզակի աշխատանք է վերջերս ընթերցասեր և գիտական հասարակության դատին հանձնված՝ պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Ասոյանի երկարամյա ուսումնասիրության արգասիքը՝ «Հայերը Ռուսական կայսրությունում 19-րդ դարի վերջին. Պատմաժողովրդագրական հետազոտություն (ըստ 1897 թվականի Համառուսաստանյան մարդահամարի տվյալների)» աշխատությունը:

Ռուսական կայսրությունում, նրա տարբեր տարածաշրջաններում բընակվող հայության վերաբերյալ խորհրդահայ պատմագիտության կողմից կատարված հետազոտություններն առավելապես նվիրվել են հայկական գաղթօջախների, համայնքների հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքին: Այդ ուսումնասիրություններում, անշուշտ, անդրադարձ է կատարվել ինչպես առանձին տարածաշրջաններում (օր.՝ Դոն, Ղրիմ, Հյուսիսային Կովկաս, Միջին Ասիա և այլն) հայկական գաղութների հիմնման ու զարգացման պատմությանը, այնպես էլ այստեղ ապրող հայ ազգաբնակչության թվաքանակին ու տեղաբաշխմանը: Հիշյալ աշխատություններն արժանի տեղ են գրավել հայ պատմագիտության մեջ, այդուհանդերձ, մի որոշակի ժամանակաշրջանի և ամբողջական հետազոտություն Ռուսական կայսրությունում բնակվող մեծաքանակ հայության վերաբերյալ առաջին անգամ է ներկայանում գիտական շրջանակներին:

Աշխատության հեղինակ Լ. Ասոյանը, իր հետազոտության առարկան է դարձրել XIX դ. վերջին Ռուսական կայսրության հայ ազգաբնակչության թվաքանակի, տեղաբաշխման, դավանանքի, զբաղվածության, սեռատարիքային կազմի և այլ խնդիրներ:

Այն բաղկացած է նախաբանից, չորս գլուխներից, վերջաբանից, օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների ցանկից ու հավելվածից:

Նախաբանում (7-20 էջեր) ծանոթություն է տրված աշխատության սկզբնաղբյուրներին և գրականությանը, խորհրդային և հետխորհրդային տարիներին հայ պատմագիտության կողմից թեմայի առնչությամբ կատարված գիտական հետազոտություններին, դրանցում առկա հիմնական շեշտադրումներին: Հեղինակը քննական վերլուծության է ենթարկել ինչպես հայ պատմագիտության մեջ թեմային առնչվող ուսումնասիրությունները, այնպես էլ ռուս պատմագիտության մեջ պատմական ժողովրդագրության բնագավառում իրականացված հետազոտությունները:

Առաջին գլխում ներկայացված են 1897 թ. Համառուսաստանյան մարդահամարի նախապատրաստումն ու անցկացումը: Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է մինչև 1897 թ. համընդհանուր մարդահամարը Ռուսաստանում կատարված հաշվառման մյուս եղանակներին, դրանց մեթոդաբանությանը և նպատակներին: 1897 թ. մարդահամարի ծրագիրն համապատասխանում էր ժամանակի միջազգային չափանիշներին, սակայն ինչպես նշում է հեղինակը, «…ըստ ժամանակակիցների վկայությունների, այն հաշվի չէր առել երկրի մշակութային և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները» (էջ 26-27), պատշաճ չէր օգտագործվել գիտական ներուժը, և ուներ զգալի թերություններ: Այս արդարացի պնդումով հանդերձ, հեղինակն իրավամբ կարևորում է մարդահամարի՝ որպես յուրօրինակ պաշտոնական փաստաթղթի հսկայական նշանակությունը Ռուսաստանի տնտեսության, ազգային կազմի, սոցիալական կառուցվածքի և բազմաթիվ այլ ոլորտների համար:

Աշխատության հիմնական բովանդակությունն ընդգրկող երկրորդ և երրորդ գլուխներում հեղինակն առանձին-առանձին ներկայացրել է հայ բնակչության տեղաբաշխումն ու սեռատարիքային կազմը ինչպես ամբողջ Կովկասում (այդ թվում՝ Անդրկովկասում՝ ըստ նահանգների, այլ էթնիկ խմբերի հետ միասին), այնպես էլ Եվրոպական Ռուսաստանի և կայսրության մյուս տարածաշրջաններում՝ Սիբիրում, Միջին Ասիայում:

Այստեղ հեղինակն աղյուսակներով հստակ ցույց է տվել ոչ միայն հայ բնակչության տեղաբաշխումն ու թվաքանակը՝ ըստ նահանգների ու մարզերի, այլ նաև աճի դինամիկան, հաճախ անդրադարձ է կատարել այս կամ այն համայնքի պատմության սկզբնավորմանն ու հետաքրքիր կողմերին: Ներկայացված են նաև քաղաքաբնակ ու գյուղաբնակ հայ ազգաբնակչության կշիռը, զբաղվածության աստիճանն ու ոլորտները, ինչն անհամեմատ հետաքրքիր ու կարևոր է դարձրել նյութի շարադրանքը: Հիշյալ գլուխներում հեղինակը ներկայացրել է նաև հայ բնակչության կրոնական պատկանելությունը, կրթական մակարդակը և այլ գործընթացներ:

Վերջին գլխում հեղինակն հատուկ ուշադրություն է հատկացրել հայ ազգաբնակչության զբաղվածության և սոցիալ-դասային կազմին, որով էլ հնարավոր է դարձել վերհանել նաև հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները: Հանգամանորեն ներկայացված են և իրենց թվային արտահայտությունն են գտել սոցիալական կազմով տարբեր խմբերը՝ ազնվականությունը, հոգևորականությունը, պետական ծառայողները, արհեստավորներն ու բազմաթիվ այլ ոլորտներում ներգրավ-

վածները: Այստեղ առկա են նաև տարբեր տարածաշրջանների հայ բնակչության կրթական ասպարեզին և գրագիտությանը վերաբերող տվյալները, որոնք տեղ են գտել աղյուսակներում:

Վերջաբանում հեղինակը հանրագումարի է բերել հետազոտության արդյունքներն ու շարադրել է իր եզրահանգումները: Հավելվածում (էջ 209-233) նա տվել է իր հիմնական շարադրանքի աղյուսակային պատկերը, որը լավագույնս արտահայտում է մարդահամարի՝ հայ ազգաբնակչությանը վերաբերող տվյալների ամփոփ նկարագիրը:

Աշխատանքը շարադրված է գրագետ հայերենով, իսկ տեխնիկական բնույթի որոշ վրիպակներ չեն նվազեցնում ուսումնասիրության արժեքը. այն կարող է լուրջ հիմք դառնալ պատմական ժողովրդագրության խնդիրներով զբաղվող մասնագետների համար:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ. Ս.
Պատմական գիտությունների թեկնածու